17 հոկտեմբերի 2013 թվականի N 1119 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.13-րդ կետով.

«5.13 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին սպասարկելու համար հատկացվում է մեկ ծառայողական ավտոմեքենա:».

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 10.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

10.1.	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	3	2	1

»,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ընդամենը	1669	642	1027

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: